

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սույն համագործակցության համաձայնագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Ինտերնետ հանրություն» Հասարակական Կազմակերպության միջև Հայաստանի Ինտերնետի ոլորտի զարգացմանը նպաստելու և Ինտերնետ հասարակության հետ ավելի անմիջական կապ ստեղծելու նպատակով՝ բարի կամքի և փոխադարձ հարգանքի դրսևորման հիման վրա:

1. Համագործակցության առարկան և խնդիրները

ա) «Ինտերնետ հանրություն»-ը ICANN կազմակերպության կողմից լիազորված լինելով վարելու Հայաստանի Ինտերնետ տիրույթի հասցեավորման ռեգիստրը՝ արդյունավետ կերպով իրականացնելով այդ տիրույթի կառավարումը, իր գործունեությունը իրականացնում է համագործակցելով Նախարարության հետ:

բ) ICANN Կառավարության Խորհրդատվական Կոմիտեյում (GAC) Հայաստանի Հանրապետության Կառավարության ներկայացուցիչը ընդգրկված է «Ինտերնետ հանրության» վարչության կազմում՝ առավել արդյունավետ համագործակցությունն ապահովելու նպատակով:

գ) «Ինտերնետ հանրություն»-ը անդամակցելով և ներկայացնելով Հայաստանի Ինտերնետ համայնքի շահերը Եվրոպական երկրների Ինտերնետ տիրույթների կառավարող կազմակերպությունների հանրությունում առավելագույնս նպաստում է Հայաստանի ինտեգրմանը Եվրոպական կառույցներին:

դ) Նախարարությունը և «Ինտերնետ հանրություն»-ը ապահովում են տեղեկատվության փոխանակում միմյանց միջև Ինտերնետ ոլորտին առնչվող իրավական ակտերի, համաձայնագրերի, Հայաստանի Ինտերնետ ոլորտի և Ինտերնետի համաշխարհային զարգացման միտումների վերաբերյալ:

ե) Նախարարությունը և «Ինտերնետ հանրություն»-ը իրականացնում են Ինտերնետ ոլորտին առնչվող հարցերի համատեղ քննարկումներ և հանդես գալիս փոխադարձ առաջարկություններով:

զ) Նախարարությունը և «Ինտերնետ հանրություն»-ը իրականացնում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և Ինտերնետ ոլորտի զարգացման հայեցակարգային նախագծերի համատեղ մշակմանն ուղղված աշխատանքներ:

է) Նախարարությունը և «Ինտերնետ հանրություն»-ը անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին ապահովում են Ինտերնետ ոլորտի վերաբերյալ համատեղ մշակված տեղեկատվական-վերլուծական նյութերով:

ը) “Ինտերնետ հանրություն”-ը նախարարության քննարկմանն է ներկայացնում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի արդյունավետ կարգավորման վերաբերյալ առաջարկություններ:

թ) Նախարարությունը “Ինտերնետ հանրության” տրամադրում է խորհրդատվություն Ինտերնետ տիրույթի կառավարման հետ կապված համաշխարհային, տարածաշրջանային և այլ միջազգային կազմակերպությունների կողմից վարվող քաղաքականության վերլուծության հիման վրա:


ժ) Նախարարությունը և “Ինտերնետ հանրություն”-ը խրախուսում են իրենց ներկայացուցիչների համատեղ մասնակցությունը տեղական և միջազգային համաժողովներին, խորհրդակցություններին, սեմինարներին և այլ ներկայացուցչական միջոցառումներին՝ նվիրված տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և Ինտերնետ ոլորտի հարցերին:

2. Իրավական բնույթը, գործողության ժամկետը

ա) Նախարարության և “Ինտերնետ հանրության” համագործակցությունը կողմերի համար չունի պարտադրանքի որևէ բնույթ:

բ) Համաձայնագիրը գործում է անժամկետ, կարող է դադարացվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

ՀՀ տրանսպորտի և կապի
նախարարություն



“Ինտերնետ հանրություն” հասարակական
կազմակերպության նախագահ

Իգոր Մկրտչյան

Մայիսի 28, 2009թ.

